

ԵՎՐՈՊԱՑԻ ՆԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ (XIII—XVI ԴԴ.)

Աղբյուրագիտական ակնարկ

Պատմ. գիտ. դոկտոր Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

Եվրոպացի հնդիսականները հայերի և Հայաստանի մասին թողել են ուղեգրություններ, դիվանագիտական դեկլարացիաներ, աբելյան երկրների հետ եվրոպական երկրների կնքած առևտրական տրադաքտներ, այլևայլ առևտրական գործարքներ, ճիզվիս միսիոներների զեկուցագրեր Հայաստանից, Թուրքիայից ու Իրանից, երկարամյա դիտողությունների, ուսումնասիրությունների արդյունք հանդիսացող պատմական երկեր և այլն: Այդ հնդիսականների մոտ կան խիստ շահեկան ու երբեմն էլ բացառիկ նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի հասարակական-անտեսական և քաղաքական պատմությանը, կաթոլիկ աշխարհի հետ նրա ունեցած քաղաքական առնչություններին, դավաճաբանական վեճերին, մշակույթի հարցերին, աշխարհագրական միջավայրին ու բազմաթիվ այլ բնագավառներին ու խնդիրներին: Բոլոր այդ աշխատությունները համարժեք չեն. խիստ արժեքավոր աշխատությունների կողքին կան թուլերը և պարզապես աշխարհիք, որոնք սոսկ քաղաքություններ են նախորդ եվրոպացի հնդիսականներից: Հենց սկզբից ընդգծենք, որ եվրոպական այս աղբյուրներին պետք է քննադատական մոտեցում ունենալ: Գալով Արևելք, եվրոպացի հնդիսականներից շատերը իրենց պետությունների որոշակի հանձնարարություններ են կատարել և որոշակի դիրքերից նկարագրել այս կամ այն երկրի հասարակագրք: Եթե նա վաճառական է եղել, ապա առավել ուշադրություն է դարձրել տվյալ երկրի առևտրի հնարավորություններին և առևտրական ուղիներին: Եթե նա դիվանագիտական ներկայացուցիչ է եղել, ապա նրան նախ և առաջ հետաքրքրել է երկրի քաղաքական ու ռազմական վիճակը: Կաթոլիկ միսիոներների առաջ խնդիր էր դրված դրադվել հոգեորոշությամբ, այսինքն՝ «հերձվածող» արևելյան քրիստոնյաներին կաթոլիկադավան դարձնել՝ կաթոլիկ աշխարհի համար կայուն հենարան ստեղծելու իրենց հեռու գնացող քաղաքական ծրագրերն իրագործելու նպատակով: Այս բոլորը, սակայն, չեն նսեմացնում եվրոպական այս աղբյուրների գիտական ու պատմական նշանակությունը:

Հատուկ կուղենալինք ընդգծել, որ մեր շարադրած աղբյուրների այս տեսությունը սպառիչ անդեկություն չի տալիս հայ ժողովրդի պատմության վերաբերյալ եվրոպական աղբյուրներում եղած նյութերի մասին: Կասկածից վեր է, որ եվրոպական արխիվներում առ այսօր մեղ հեռաբերող չհրապարակված նյութեր կան, իսկ հրատարակվածներից էլ ոչ բոլորն են, որ այստեղ չիշատակվել են:

Չպիտք պետք է նշել, որ այդ նյութերը հատուկ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել հայ իրականության մեջ, եթե զանց առնենք Գ. Վ. Զարրհանալյանի և Կ. Կոստանյանցի² երկու գրքուկները, որոնց մեջ առավել ուշադրություն է դարձված հայոց լեզվի և բանահյուսության ուսումնասիրությանը եվրոպայում XIII—XIX դդ.: Այդ երկու գրքուկները է՛լ ավելի արժեքավորվում են մատենագրական տվյալներով:

1932 թ. նրեանում յույս տեսավ Հովհ. Հակոբյանի «Ուղեգրություններ»³ վերնագրով երկասիրությունը, ուր ոչ միայն բերված են թարգմանական քաղվածքներ XIII—XVI դդ. եվրոպացի ուղեգիրներից, այլև դրանց կցված են ծանոթագրություններ, ուղեգիրների մասին որոշ նենսագրական տվյալներ: Հովհ. Հակոբյանի գրքում, սակայն, ոչ միայն տեղ չեն գտել բոլոր

¹ Գ. Վ. Զարրհանալյան. Ուսումնասիրություններ հայ լեզվի և մատենագրության ի Արևմուտս. Վենետիկ, 1895:

² Կ. Կոստանյանց. Հայագիտություն Արևմտյան եվրոպայում. Թիֆլիս, 1910:

³ Հովհ. Հակոբյան. Ուղեգրություններ. Երևան, 1932:

ուղեգրությունների նյութերը Հայաստանի և հայերի մասին, այլև ժամանակագրական առումով ընդգրկված է միայն մինչև XVI դարն ընկնող ժամանակահատվածը:

Սովետական պատմագրության մեջ երկու աշխատություններ անմիջական առնչություն ունեն խնդրո առարկա այս թեմայի հետ: Մեկը ակնհայտ արևելագետ Վ. Վ. Բարտոլդի «Արևելքի ուսումնասիրության պատմությունը Եվրոպայում և Ռուսաստանում»⁴, մյուսը՝ Մ. Ա. Պոլիսկոյի XIII—XVIII դարերի եվրոպական ուղեգիրները Կովկասում⁵ աշխատություններն են: Վերջինը տեղեկությունների ժողովածու է XIII—XVIII դդ. եվրոպացի հեղինակների կենսագրությունների վերաբերյալ, ինչպես նաև որոշ մատենագիտական նյութերի հաղորդում: Ինչ վերաբերում է Վ. Վ. Բարտոլդի աշխատությանը, ապա դա համառոտ շարադրանք է եվրոպացի հեղինակների Արևելք կատարած ուղեգրությունների պատմական շարժառիթների մասին: Եվս երկու աշխատություններ աղբյուր ունեն սույն հարցի հետ: Առաջինը Ջ. Ի. Յամպոլսկու «Ճանապարհորդները Ադրբեջանի մասին»⁶, երկրորդը՝ Ն. Կ. Օրլովսկայայի «Վրաստանը XVII—XVIII դարերի Արևմտյան եվրոպայի գրականության մեջ»⁷ վերնագրով գրքերն են: Ջ. Ի. Յամպոլսկու հրատարակած հատորում տեղ են գտել անցյալում տարբեր ժամանակ ուսերեն թարգմանված, XIII—XVIII դդ. եվրոպացի մի շարք ճանապարհորդների, որոնց թվում՝ Վիլհելմ Սուբերկի, Մարկո Պոլոյի, Կլավդիոյի, Յոսաֆաթ Բարրարոյի, Ամբրոջիո Կոնտարինիի, Անտոնի Զենկինսոնի, Ադամ Օլևարիուսի, Յա. Ստրելյուի ուղեգրությունները Ադրբեջանի մասին, ինչպես նաև առանձին քաղվածակներ հատվածներ ուսերեն մի քանի հայտնի ուղեգրություններից: Բերված նյութերի մի ղզալի մասը վերաբերում է պատմական Հայաստանին: Որոշ ծանոթագրություններ գրված են ոչ ճիշտ գիրքերից, ակնհայտ է պատմական իրականությունն անտեսելու միտումը Ջ. Ի. Յամպոլսկու կողմից:

Ինչ վերաբերում է Ն. Կ. Օրլովսկայայի վերոհիշյալ գրքին, ապա այնտեղ XIII—XVIII դդ. եվրոպական հեղինակներից Վրաստանի մասին բերված նյութերը խիստ համառոտ են: Գրքում ավելի մեծ տեղ է տրված եվրոպական պատմագրության մեջ վրացերեն լեզվի ու բանասիրության հարցերին:

Սովետահայ պատմագրության մեջ եվրոպական հեղինակների առանձին վկայություններ օգտագործել են Լենն⁸, Ջ. Ս. Անասյանը⁹, Աշ. Հովհաննիսյանը¹⁰, Մ. Կ. Զուլայանը¹¹ և այլք: Այս առումով հատկապես պետք է առանձնացնել Աշ. Հովհաննիսյանին, որը իր մեծարժեք «Դրվագներում» հիմնական շրջանառության մեջ է դրել բազմաթիվ քաղվածքներ այդ հեղինակներից՝ անելով համապատասխան գիտական եզրակացություններ:

Եվրոպացի հեղինակների աշխատությունները բազմաբովանդակ են: Գ. Վ. Զարբանյանը գրանք բաժանում է երեք խմբի՝ ա) դիվանագիտական, երբ արևմտյան ազգը և ժողովուրդը, ընդհանրապես արևելքի, և մասնավորաբար մեր աշխարհին հետ ունեցած հարաբերությանը պատճառով սկստն ծանոթանալ Հայաստանի, և անոր բնակչաց պատմությանը, աշխարհագրությանը և լեզվին: բ) Երբ այն առիթով, և նախ և առաջ մեր թագավորաց ոմանց խնդրանք՝ լՍԸԼ) սկսան արևմտյան հոգևորականք մուտ գտնել ի մեր աշխարհ, և հմտանալով մեր լեզվին՝ աշխատել կրոնական և բանասիրական տեսակետով: գ) Ուսումնականք»¹²: Այստեղ հեղինակը նկատի ունի XVII—XIX դդ. եվրոպացի հայագետների գիտական հետազոտությունները: Անշուշտ, մեզ առավել հետաքրքրող նյութերը դիվանագիտական ուսումնասիրություններն են:

⁴ В. В. Бартольд. История изучения Востока в Европе и России. Л., 1925.

⁵ М. А. Полиевктов. Европейские путешественники XIII—XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935.

⁶ Путешественники сб Азербайджане. Т. I. Составил З. И. Ямпольский. Баку, 1961.

⁷ Н. К. Орловская. Грузия в литературах Западной Европы XIII—XVIII веков. Тбилиси, 1965.

⁸ Լեն. Հայոց պատմություն. հ. 3, Երևան, 1946:

⁹ Ջ. Ս. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961:

¹⁰ Աշ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք Երկրորդ, Երևան, 1959:

¹¹ Մ. Կ. Զուլայան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., Երևան, 1980:

¹² Գ. Զարբանյան. Նշվ. աշխ., էջ 7:

* * *

Հանրահայտ է, որ Արևելքի հետ եվրոպական երկրների ունեցած քաղաքական-դիվանագիտական հարաբերությունները սկսեցին XI դարի վերջերից՝ կապված խաչակրաց արշավանքների հետ: Խաչակիրները եվրոպացի տվառատերերի և առևտրականների առաջ բաց արեցին հերթափոխ Արևելքը, որն իր ստեղծած նյութական ու գրական մշակույթով ոչ միայն չէր զիջում, այլ որոշ առումով գերազանցում էր Արևմտյան եվրոպայի երկրներին: Խաչակիրները Արևելքում երևացին ոչ թե քրիստոնեական սուրբ վայրերը և արևելյան քրիստոնյաներին ազատագրելու, ինչպես միամտորեն այն ժամանակ կտրծում էին հայ պատմիչներից ոժանթ¹³, այլ երկրամասը կողոպտելու նպատակով:

Խաչակիրների քրիստոնյա քարոզչությունից խաբված Կիլիկիայի հայ իշխույնները նրանց տրամադրեցին ընդարձակ կալվածքներ, ուլլեայլ արտոնագրեր առևտրի ու այլ բնագավառներում: Աստիճանաբար ամրադնդելով իրենց դիրքերը Կիլիկիայում, խաչակիր արկածախնդիրները կանգ չառան նույնիսկ Կիլիկիայի հայոց իշխանների ամրոցների հափշտակման առաջ, իսկ հետագա դարերում արդեն կաթոլիկ աշխարհի հերկաչացուցիչները Կիլիկիայում հայերից դահանջում էին ենթարկվել հոռմենական եկեղեցուն, հոգեպես ձուլվել նրանց հետ՝ հրաժարվելով նույնիսկ մայրենի լեզվից: Արևելքում գտնվելու հարյուրամյակների ընթացքում խաչակիր ասպետները ոչ միայն ոչնչով չնպաստեցին Կիլիկիայի հայկական պետության ամրապնդմանը, այլ ընդհակառակը՝ ամեն կերպ նպաստեցին նրա թուլացմանն ու քաղաքական անկմանը:

Իսկ մինչ այդ կաթոլիկ եվրոպայի երկրները, ու մասնավորապես Վենետիկն ու Զենովան, Կիլիկիայի վրայով Արևելքի երկրների հետ ծավալեցին լույն առևտրական գործարքներ: Դեռևս 1201 թ. նրանք հայոց թագավոր Լևոն II-ից (1198—1219 թթ.) կորդեցին առևտրական մի պայմանագիր, որն իրենց վաճառականներին ապահովում էր բացառիկ արտոնյալ վիճակ: Ես իտալական վաճառականներին արտոնում եմ,— դրում էր Լևոն II-ը իր շնորհագրում,— որ նրանք «...իրենց գույրերով ու ապրանքներով իմ ամբողջ թագավորության մեջ, քաղաքներում թև գյուղերում, երկրի ողջ տարածքում երթևեկեն անվտանգ... գան ու վերադառնան, ազատ ու հանգիստ գնեն ու վաճառեն առանց որևէ մի հարկադրանքի, հարկերի, առևտրատուրքերի ու մաքսերի գանձման»¹⁴: Այդ արտոնությունների շարանը գնալով աճեց, և փաստորեն Զենովայի ու Վենետիկի համայնքները դարձան մի տեսակ պետություն պետության մեջ¹⁵: Այս բոլոր տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Կիլիկիայում հաստատվեց հայկական թագավորությունը: Ճիշտ չէ, անշուշտ, Վ. Հեյդի այն ենթադրությունը, թե Վենետիկն ու Զենովան կարող էին առևտրական արտոնություններ ունեցած լինել մինչև հայկական թագավորության հիմնադրումը Կիլիկիայում: Վ. Հեյդի այս ենթադրությունը հիմնված է այն փաստի վրա, որ XII դարում Կիլիկիան անվանապես համարվում էր Բյուզանդիայի նահանգներից մեկը, իսկ վերջինս այս երկր-քաղաք-պետությունների հետ կնքել էր առևտրական պայմանագիր¹⁶: Վ. Հեյդը չի նկատում, որ այդ ժամանակ (1132 թ.) Դաշտային Կիլիկիան (Ադանան, Տարսուսը, Մամեստան) գտնվում էին սելջուկների գերիշխանության տակ:

Խաչակրաց առաջին իսկ արշավանքից հետո խիստ նվազեց Բյուզանդիայի՝ որպես եվրոպայի ու Արևելքի միջև միջնորդ պետության դերը: Այժմ արդեն առևտուրն Արևելքի հետ կատարվում էր սիրիական նավահանգիստների միջոցով: Սելջուկների արշավանքներից հետո խիստ անկում էին ապրել այն առևտրական ուղիները, որոնք անցնում էին Սև ծովի ու Հայաստանի

¹³ «Իրաքանչիւր զօրօքն զային օգնութիւն քրիստոնէից և առ փրկել յայլազդեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ և ազատել ի Տաճկաց զսուրբ գերեզմանն աստուածընկալ, արք փառաւորք և խղատորագունք, հաւատով և ամենայն աստուածապաշտութեամբ զարդարեալք և էին անեալք ի գործս բարութեան,— գրում է առաջին խաչակիրների մասին Մ. Ուոհայեցին (տե՛ս Մ. Ուոհայեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 254): Իր հերթին Ս. Անեցին էլ գրում է, թե «Հռոմեացիք էին ընդ թիրսկ ի կողմանս Ասիացոց խնդրել զքէն վրիժուց տառապանաց քրիստոնէից՝ ի Սկիւթացոց և ի Պարսից՝ հանդերձ Տաճկաստանու» (Սամվել Անեցի. Հատմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 120):

¹⁴ V. Langlois. Le treësor des chartes d'Arménie, Venise, 1863, p. 107.

¹⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս W. Heyd. Histoire du commerce du Levant. Paris, 1965, p. 367—373.

¹⁶ Նույն տեղում, էջ 369:

վաճառա՜հ՝ էկետրոնների (Տրապիզոն, Արծն, Կարս, Անի և այլն) միջով: Առևտրական նոր ուղիներն անցնում էին Կիլիկիայի վրայով ու մտնում Փոքր Ասիայի այն տարածքը, որը գավթ-ված էր սելջուկների կողմից: Հենվելով Իբն Բիբաչի ու այլ աղբյուրների վրա, Գ. Միքայելյանը ցույց է տալիս, որ հաճախ սելջուկների ու Կիլիկյան հայկական պետության միջև ռազմական ռնդհարումների գլխավոր պատճառը հանդիսանում էր առևտրական ուղիների դավթման ձգտումը սելջուկների կողմից¹⁷: «Մուսուլմանական, հունական և հայկական աղբյուրները արժեքավոր վկայություններ են հաղորդում Փոքր Ասիայում կարավանային ուղիների, առևտրական կենտրոնների ու նավահանգիստների դավթելու նպատակով Ռումի սուլթանների նվաճողական արշահանքների մասին»¹⁸, կարդում ենք դարձյալ Գ. Միքայելյանի մոտ:

Այլ պատերազմների անմիջական արդյունքը հղավ այն, որ սելջուկները 1207 թ. գրավելով Ատտալիան, իսկ 1214 թ.՝ Սինոպը, դուրս եկան Միջերկրական ու Սև ծովերը և դրանով իսկ սկսեցին իրենց ձեռքում պահել կարավանային առևտրի կարևորագույն ուղիների մի մասը: Այսուհանդերձ, Արևելյի հետ Եվրոպայի առևտուրը հիմնականում XII ու հետագա դարերում կատարվում էր Կիլիկիայի տարածքի միջոցով: «Առևտրի սեռանկյունից,— դրում է Վ. Հեյդը,— Հայկական թագավորությունը գտնվում էր առանձնահատուկ նպաստավոր պայմաններում: Նրա ամենամեծ տարածման ժամանակ, այսինքն, Լևոն II-ի իշխանության օրերին, նա գրավում էր մի զգալի ծովափ, որն ընդգրկում էր արևելքում Ալեքսանդրիայի ծոցից մինչև Ատտալիայի ծովախորշին մի քանի մղոն չհասած տարածքը»¹⁹: Կիլիկիայի վրայով դեպի Եվրոպա էին առաքվում հնդկական, շինական և պարսկական ընտիր գործվածքներ, Միջագետքի, Փոքր Ասիայի և Կիլիկյան Հայաստանի արհեստագործական նուրբ արտադրությունն ու գյուղատնտեսական մթերքները: Հատկապես XIII դարի երկրորդ կեսից սկսած միջազգային առևտրում մեծ դեր սկսեց խաղալ Այաս նավահանգիստը: Այն հանգամանքը, որ կաթոլիկ Եվրոպայի հետ Կիլիկիայի խաղաղության կնքած առևտրական պայմանագրերում Այաս նավահանգիստի անունը առաջին անգամ հիշատակվում է 1261 թ., թույլ է տվել Աշ. Հովհաննիսյանին եզրակացնելու, որ Այասը «...խոշոր նշանակություն ստացավ ոչ թե խաչակիր թագավորությունների կամ լատինական իմպերիայի ժամանակ, այլ դրանց անկումից հետո»²⁰: Այստեղից էլ, բնականաբար, բերում է, որ անհիմն են եվրոպացի բուրժուական պատմաբանների այն պնդումները, որ Եվրոպայի հետ Կիլիկյան հայոց թագավորների կնքած առևտրական պայմանագրերը, գործարքները մեծապես նպաստել են տեղական առևտրին ու արդյունաբերությանը, քաղաքների զարգացմանը:

Եվրոպայի հետ Կիլիկիայի հայոց թագավորության ունեցած տնտեսական, քաղաքական և այլ բնույթի մի քանի հարյուրամյակ տևած այս առնչություններն իրենց արտացոլում են գտել Եվրոպական աղբյուրներում: Դրանք Կիլիկիայի հայոց պատմության մասնագետներից մեկը՝ Ս. Վ. Բոռնազանը, բաժանում է մի քանի խմբերի: «Առաջին խմբին են պատկանում,— գրում է նա,— արևմտաեվրոպական երկրների, Սիրիայի խաչակիր պետությունների, արաբական և բյուզանդական հեղինակների մատենագրական և իրավաբանական երկերը: Երկրորդ խմբին են պատկանում՝ եվրոպական մի շարք երկրների պետական արխիվներում պահպանված արխիվային նյութերը, Կիլիկիայի հայկական պետության արքունիքի կամ նոտարական գրասենյակների կողմից բաց թողնված ակտերը, կամ թե պուպի, ուրևմտաեվրոպական պետությունների, հարևան արաբական պետությունների և Կիլիկիայի հայկական թագավորության միջև եղած թղթակցությունները, ...պետական ստյանի կողմից բաց թողնված առևտրական շնորհագրերի և պայմանագրերի, հողային նվիրատվությունների և հաշտության պայմանագրերի լատիներեն, ֆրանսերեն, արաբերեն և հայերեն լեզուներով գրված բնագրերն ու պատճենները»²¹: Արխիվային նյութերի ղգալի մասը պահպանվել է Ջենովայի, Վենետիկի, Միլանի, Տուրինի, Մալթայի, Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի, Նեապոլի, Վատիկանի և Մադրիդի պետական

¹⁷ Г. Г. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 191—194.

¹⁸ Նույն տեղում, էջ 191:

¹⁹ W. Heyd. Op. cit., I, p. 367.

²⁰ Աշ. Հովհաննիսյան. Դրվագներ..., էջ 59:

²¹ Ս. Վ. Բոռնազյան. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան պետությունում. Նրան, 1973, էջ 23:

արխիվներում, որոնց ընդհանուր քանակը ըստ Վ. Լանգլուայի և էդ. Դյուլորիեի հաղորդումների հասնում է 351-ի:

Այս բոլոր նյութերի զգալի մասը, շնորհիվ Վ. Լանգլուայի²², էդ. Դյուլորիեի²³, Վ. Հեյդի²⁴, Վ. Զ. Ռուդոլֆ-Կոլլենբերգի²⁵, Ռ. Գրուսսեի²⁶, Ֆ. Տուրնեբիզի²⁷ ու այլոց աշխատությունների մտել է գիտական շրջանառության մեջ: Կիլիկիայի քաղաքական պատմության տեսանկյունից հիշարժան են խաչակրաց արշավանքներին նվիրված ժողովածուները²⁸, ինչպես նաև Հովհան Դարգելի «Ժամանակագրությունը»²⁹: Վերջինը հղել է Լեոն VI թագավորի խորհրդականն ու խոստովանա՜յալը, ու հավանաբար իր «Ժամանակագրությունը», որն ընդգրկում է Կիլիկիայի ափերի քան մի հիսնամյա քաղաքական պատմություն, գրվել է հենց թագավորի թեմադրությամբ Կահիրեում, գերեզարության ընթացքում: Վերջապես՝ որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև 1211—1212 թթ. Կիլիկիա այցելած Վիլլերանդ Օլդենբուրգցու՝ ավստրիական դքսի դեսպանի «Ուղեգրությունը»³⁰:

Եվրոպական երկրների ուշադրությունը դեպի Արևելք խիստ մեծացավ XIII դարում՝ կապված մոնղոլական արշավանքի հետ: Եվրոպայում վաղուց էր տարածված մի խուլ լուր, որ իբր հեռավոր Ասիայում գոյություն ունի քրիստոնյա աստվածապետական մի պետություն ունի Հովհաննես երեցի գլխավորությամբ՝ 1165 թ. նույնիսկ լատիներեն լեզվով լույս տեսավ մի գրքույկ, ուր Հովհաննես երեցի անունից եվրոպայի քրիստոնյա պետություններին համագործակցելու կոչ էր արվում: Հոռմի պապն ու ֆրանսիական թագավորներն Արևելք ուղարկեցին Պլանո Կարպինիին (1246 թ.), Լեոնիմիին (1248 թ.), Թուրքոբին ու այլոց՝ Արևելքի քրիստոնյա ալի պետության մասին ստույգ տեղեկություններ հավաքելու նպատակով: Իսկ ինչ էր իրականում այդ «քրիստոնյա պետությունը» Արևելքում: Լոկ մի առասպել, որի հիմքում «...ընկած էր այն իրողությունը, որ հեռու Արևելքում միսիոներական եռանդուն աշխատանք էին կատարում սիրիացի նկատորակները, որոնց, ինչպես նշում են եվրոպական հետադոտողները, հաջողվել էր XI դարի առաջին կեսերին քրիստոնեության առաքյալ դարձնել Զինդիգ խանի նախորդներից մեկին՝ Ունչխանին: Հովհան անունը Ունչխանի քրիստոնեական անունն էր»³¹:

Եվրոպացիների համար հայտնի էր դարձել նաև, որ մոնղոլները կատաղի ատելությամբ են լցված դեպի մուսուլմանական աշխարհն ու հովանավորում են քրիստոնյաներին: Նման լուրեր տարածողները հենց իրենք մոնղոլներն էին, որոնք հետամուտ էին քաղաքական նպատակներին: Նույնով մոնղոլների առաջին արշավանքների մասին, Կիրակոս Գանձակեցին գրում է, թե «Խամբալ ստուրբան զայր զնոցաճէ (ընդգծումը մերն է—Մ. Զ.), թէ մոգք են և քրիստոնեայ հաւատով և նշանագործք, և եկեալ են ի վրէժխնդրութիւն քրիստոնէից որ ի բռնութեան

²² V. Langlois. Le trésor des chartes d'Arménie. Venise 1863; Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie. St. Pétersbourg, 1860; Inscriptions grecques, romaines, byzantines et arméniennes de la Cilicie. Paris, 1867; Voyage dans la Cilicie. Paris, 1861.

²³ Ed. DuLaurier. Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie.—Journal Asiatique, 1861, 5e série, t. XVII, XVIII.

²⁴ W. Heyd. Histoire du commerce du Levant. T. I—II, Paris, 1965.

²⁵ W. H. Rudt-Collenberg. The Rupenides, Hethumids and Lusignans. Paris, 1963.

²⁶ R. Grousset. Histoire des croisades et du royaume franc de Jérusalem. Vol. I—III, Paris, 1936.

²⁷ F. Tournet. Histoire politique et religieuse de l'Arménie. Paris, 1900.

²⁸ Recueil des historiens des croisades. T. I, Documents arméniens. T. II, Documents latins et français relatifs à l'Arménie. T. III, Recueil des historiens des croisades. Historiens occidentaux. Paris, 1906.

²⁹ J. Dardel. Chronique d'Arménie.—Recueil des historiens des croisades I, Paris, 1906. Տե՛ս նաև հայերեն հրատարակությունը՝ Հովհաննես Դարգելի ժամանակագրութիւն Հայոց. Սպր., 1891:

³⁰ Willebrand d'Oldenbourg. Itinéraire. Hambourg, 1959.

³¹ Ա. Զ. Հովհաննիսյան. Դրվագներ..., գիրք առաջին, էջ 317:

Տաճկաց. և ասիին՝ թէ ունին եկեղեցի վրանեայ և խուշ սքանչելագործ... և այսպիսի ստույգեան համբաւօք լցաւ աշխարհս մերս³²։ Սա մի միջոց էր շեղութեանը Արեւելի քրիստոնյա պետություններին, հայատակեցնելու նրանց ու նրանց գինական օգնութեամբ հարվածելու մոսուլմանական աշխարհը։

Պլանո Կարպինին, ֆրանցիսկյան այդ հոգեւորականը, Արեւելք ուղարկվեց 1246 թ. Լիոնի եկեղեցական ժողովի որոշմամբ, պապ Իննոկենտիոս IV-ի կողմից։ Նա Ձինգիզ խանի հետ-նորդների ժամանակակիցն էր ու թողել է «Մոնղոլների պատմություն» վերնագրված աշխատու-թյունը³³, որը պարունակում է հետաքրքիր տեղեկություններ մոնղոլների կենցաղի, սովորույթ-ների, ուղղմական արվեստի, ինչպես նաև XIII դարի 20—30-ական թթ. Վրաստանի քաղա-րական պատմության մի քանի հարցերի շուրջ։ Պլանո Կարպինին, նկարագրածի անմիջական աղանաւտեսն է, «...քանզի մենք եղանք նրանց մեջ և նրանց հետ (իմա՝ մոնղոլների—Մ. Զ.) աղելի բան մի տարի ու չորս ամիս... նրանց մասին մենք իմացանք նաև նրանց մոտ գերու-թյան մեջ գտնվող արժանաւաւատ քրիստոնյաներից»³⁴։

Մոնղոլների ու նրանց կողմից հայատակեցված երկրների մասին հավաստի ու հարուստ տեղեկություններ կան Վիլհելմ Բուրբուկի³⁵ (մոտ. 1215—1270) գրվածքում։ Նա ֆրանցիսկ-յան միաբան էր Ֆլանդրիայից. ծնվել էր Ֆրանսիայի ծայր հյուսիսում գտնվող Ռուբրուկ գյու-ղում, այսպեղիպ էլ նրա մականունը։ 1253—1255 թթ. ընթացքում նա Լուդովիկոս IX-ի կող-մից ուղարկվեց մոնղոլների խան Մանգուի մոտ։ Ռուբրուկը իր ուղեգրությունն սկսում է Կոս-տանդնուպոլիսից, որտեղից հեռանում է 1253 թ. մայիսի 7-ին, Սև ծովի վրայով ուղևորվելով դեպի Սուլթան (Սուլթան, Ղրիմում), այնտեղից էլ Մատրիգայի (Ազովի մոտ), Տանայիսի (Մոնի), Իսիլի (Վոլգայի) վրայով շարժվում է «Մեծ խանի» նստավայր հանդիսացող Կարա-Էորում, ուր հասնում է 1253 թ. դեկտեմբերի 27-ին ու մնում մինչև 1254 թ. հուլիսի 10-ը։ Մոնղոլիայից Ռուբրուկը վերադառնում է Դերբենտի, Շամախի, Մուղանի դաշտավայրի վրայով ու մտնում է Հայաստան։ Շարունակելով իր ուղեգրությունը, նա Արաքսի երկայնքով հասնում է Անի, այնուհետև՝ Էրզրում և Իրզնկա, ապա՝ Կիլիկիա, Կիպրոս, Անտիոք և Տրիպոլի, որտեղից էլ 1255 թ. օգոստոսի 15-ին Լուդովիկոս IX-ին է հղում հաշվետվություն իր կատարած ուղե-վորության ու իր վրա դրված հանձնարարության կատարման մասին։

Վ. Ռուբրուկը հաղորդում է մեզ տվյալներ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողո-վուրդները վերաբերելու, խոսում է Թավրիզի, Շամախի, Թիֆլիսի, Նախիջևանի, Էրզրումի մա-սին, հատուկ նշում, որ «Դաշանց թղթի» գաղափարը մեծապես տարածված էր հայերի մոտ։ Վ. Ռուբրուկի շնորհիվ մենք իմանում ենք, որ մինչև Հեթում թագավորի Մոնղոլիա մեկնելը հայերը, ասորիների հետ միասին, վաղուց մոնղոլների մոտ միասնական գործունեություն էին ծավալել։

XIII դարում Արեւելքում եվրոպացիների հետաքրքրության հիմնա՝ան նյութը ոչ միայն բառարանական էր (մոնղոլների հետ դաշինք կնքելու՝ ձգտումը), այլև առևտրա՝ան, ինչպես նա-խորդը դարձավ Դրա փալտին վկայություններից է Մարկո Պոլոյի ուղևորությունը Մոնղոլիա։ XIII դարի 60-ական թթ., երբ Պոլո եղբայրները ձեռնարկեցին իրենց առաջին ուղևորությունը Սոնոդիա, Վենետիկը գտնվում էր ծաղկման գագաթնա՝նկետում և իր ձեռքում էր կենտրոնացրել Արեւելի հետ նստարկվող առևտրի ղեկավար մասը։ Ոսկային շրջանով, 1261 թ., երբ Պոլո եղբայր-ները գտնվում էին Վոլգայի ափին, Վենետիկի հավերժ փալտան Ջենովայի օգնությամբ Անգե-լոս Պալեոլոգը տապալեց լատինական կայսրությունն ու վերականգնեց բյուզանդականը։ Ջե-

³² Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց. Թիֆլիս, 1909, էջ 100 և հտ.։

³³ Մենք օգտագործել ենք ֆրանսերեն վերջին թարգմանությունը, տե՛ս Jean de Plan Carpin. Histoire des mongols, traduit et annoté par Dom Jean Becquet et par Louis Hambis. Paris, 1965.

³⁴ Նույն տեղում, էջ 24։

³⁵ Մենք օգտագործել ենք ինչպես Pierre Bergeron-ի, այնպես էլ 1877 թ. Փարի-զում լույս տեսած Լուի դե Բակերի հրատարակած տեքստերը տե՛ս Voyages faits prin- cipalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles par Benjamin Tudel, Jean de Plan-Carpin, N. Ascelin, Guillaume de Rubruquis, Marc Paul venitien, Haïton, Jean de Mandeville et Ambricse Contarini par Pierre Bergeron. T. I, Paris, 1735. Guillaume de Rubruquis, ambassadeur de Saint Louis en Orient. Récit de son voyage, traduit de l'origine latin et annoté par Louis Backer. Paris 1877.

նովագինները Արևելքում գրավեցին վենետիկցիների տեղը: 1298 թ. Դուրզուլայի նախաձեռնությամբ, որին մասնակցում էր նաև Մարկո Պոլոն, վենետիկը ծանր պարտություն կրեց Զենովայից, որի շնորհիվ վերջինս Միջերկրականում հաստատեց իր գերիշխանությունը ընդհուպ մինչև 1380 թ., երբ վենետիկյան հարված ստացավ վենետիկից: Այսուհանդերձ Մարկո Պոլոն Հեռավոր Արևելք կատարած իր ուղևորությունը մեծագույն ծառայություն մատուցեց իր հայրենիք վենետիկին և ուղի Արևմուտքին՝ եվրոպական առևտրականների առաջ բացելով Արևելքի առասպելական դռները: Մարկո Պոլոյի գիրքը, — գրում է Վ. Շկլովսկին, — գերազանցում է իր ժամանակի ողջ եվրոպական գրականությունը իր հստակությամբ, որոշակիությամբ, հզոր գրելաձևով և նյութերի առատությամբ: Զմռանն էր, որ այս աշխատանքում փորձ է արված նկարագրել մի երկիր, որը սարածվում է Ստոնգյալ օվկիանոսից մինչև հասարակած գոտին, վենետիկից մինչև Յանցզիի գետաբերանը»³⁶:

Մարկո Պոլոն (1254—1325 ըթ.) ձևվել է վենետիկի Ռիալտո կղզում: Նիկոլա Պոլոյի որդի Մարկո Պոլոն միանում է իր առևտրական եղբայրներին Արևելք կատարված երկրորդ ուղևորության ընթացքում, ծառայության մտնում մոնղոլական մեծ խան խուբիլայի մոտ և շուրջ տասնյոթ տարի վարում բավականին բարձր պաշտոններ, որից հետո վերադառնում հայրենիք:

վենետիկցիների ուղևորությունը սկսվում է Կիլիկիայի Այաս նավահանգստից և շարունակվում է Հայաստանի վրայով: Մարկո Պոլոն իր «Ուղեգրություն» մեջ մեզ հաղորդում է արժեքավոր վկայություններ Կիլիկիայի, որին նա անվանում է Փոքր Հայք, Մեծ Հայքի, Թավրիզի և Հայաստանի հարակից այլ շրջանների վերաբերյալ: Մարկո Պոլոն մնում է որպես ջերմեռանդ կաթոլիկ ու ցավով արձանագրում, որ Կիլիկիայում հայերը, չնայած քրիստոնյաներ են, բայց լավը չեն, քանի որ նրանց հավատը «այնպես չէ, ինչպես հոմեաքիների մոտ»: Մարկո Պոլոն մնում է, նախ և առաջ, առևտրական և, որպես կանոն, խոսելով իր այցելած քաղաքների մասին, նշում է, որ «բնակիչները առևտրականներ են» և կամ թե «բիշ են ունակ առևտրին»: Հայաստանին վերաբերող նյութերը հիմնականում թարգմանված են Հովհ. Հակոբյանի կողմից³⁷:

Մարկո Պոլոյից մի քանի տարի անց, մոտավորապես 1318 թ., Արևելք ու Մոնղոլիա ուղեվորություն կատարեց Օղեթիկ Ուղիների հոգևորականը, իսկ 1332 թ.՝ Ժան դը Մանդևիլը: Այս երկու հեղինակների թողած ուղեգրությունները հար և նման են իրար ու, հավանաբար, վերջինը արտագրել է իր նյութերի մեծ մասը նախորդից: Երկուսի մոտ էլ սոսապելախառն ու անարժանահավատ տեղեկությունները զգալի տեղ են գրավում: Ժան դը Մանդևիլի, ինչպես նաև հրեա Բենիամին դե Տյուդելի, Ն. Ասցելիի ուղեգրությունները հրատարակված են Պիեռ Բերժերոնի ժողովածուի³⁸ մեջ:

1330 թ. դեպի Արևելք ու Մոնղոլիա ուղևորություն է կատարում նաև Վիլհելմ Բուլդեֆելը, որը Բենեդիկտոս XII պապին է բերում 1328 թ. մեծ խան խուբիլայի բարացակած ոգով գրած նամակները: Այս ուղեգրությունը հետաքրքիր է Մոնղոլիայի ու Արևմտյան Եվրոպայի քաղաքական պատմության առնչության տեսանկյունից: Հայերի մասին տեղեկություններ համարյա բացակայում են (հեղինակը Մոնղոլիա է ուղևորվել Արաբիայի վրայով)³⁹: Ի դեպ, Հռոմի պապերի հետ մոնղոլական խաների ունեցած գրավոր բանավարությունների մասին եղած վկայությունները դարձյալ բերված են Պիեռ Բերժերոնի⁴⁰ կողմից:

Մոնղոլական կայսրության ժամանակաշրջանի պատմության հարցերին է նվիրված հայ պատմիչ Հեթումի «Արևելքի երկրների պատմության ծագկաբաղ» խորագրով աշխատությունը, որը, ուսումնասիրողների համընդհանուր կարծիքով, լավագույն է մոնղոլներին նվիրված եվրոպական աղբյուրների մեջ: Նրա երկի կարևոր առանձնահատկությունն այն է, — գրում է Լ. Զ. Բաբայանը, — որ այն հարցերի ավելի լայն շրջանակ է ընդգրկում, ավելի խորն է բացահայտում համաշխարհային թատերաբեմում մոնղոլ նվաճողների հանդես գալու նախադրյալները, քան այդ արել են Կարայիսին, Ռուբրուկը, Ասցելին և ուրիշները⁴¹:

³⁶ Victor Chiklovski. Le voyage de Marco Polo. Paris, 1948, p. 45.

³⁷ Հովհ. Հակոբյան. Ուղեգրություններ. հ. Ա, էջ 37—64:

³⁸ Pierre Bergeron. Op. cit.

³⁹ Նույն տեղում, գլ. IX, էջ 54:

⁴⁰ Նույն տեղում, գլ. X, էջ 61—65:

⁴¹ Լ. Զ. Բաբայան. Դրվագներ Հայաստանի վարգաքած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX—XIII դարեր). Երևան, 1981, էջ 341:

Հեթում պատմիչի այս աշխատությունը, ինչպիսի ճիշտ նկատել է Աշ. Հովհաննիսյանը, «...խաչակրաց նոր արշավանքի ռազմաքաղաքական մի ծրագիր էր»⁴² և սոսկ մոնղոլների պատմությունը չէ, այլ կերպ ասած՝ Հայոց Հեթում արքայի զարմիկ պատմիչը իր աշխատությունը դրելիս որոշակի քաղաքական նպատակներ էր հետապնդել, 1842 թ. Հեթում պատմիչի այս աշխատությունը լատիներենից հայերեն թարգմանել է Մ. Ավգերյանը և հրատարակել Վենետիկում⁴³:

XIV դարի վերջին և XV դարի սկզբին, Կիլիկիայի Հայկական պետության անկումից քիչ առաջ Կիլիկիա ու նրա հարակից շրջաններն էլ այցելում Ֆրանսիայի Ֆիլիպ Բարի թագավորի խորհրդատու Բերտրանդոն դե լա Բրոկերը⁴⁴: Իր ուղեգրության մեջ, որը վերնագրված է «Անդրծովյան ուղեգրություն», Բերտրանդոն դե լա Բրոկերը հաղորդում է արժեքավոր վեճակներ Կիլիկիայի քաղաքական կացության ու նրա բնակչության իրավազուրկ վիճակի մասին: Այնպեղ խոսվում է այն մասին, թե ինչպես Ռամազան-Օղլու, Ջուղաթար-Օղլու և Կարասան-Օղլու թուրքմենական ցեղերը տեր ու տնօրինություն էին անում Կիլիկիայի տարբեր շրջաններում: Նրա հարակից շրջաններում: Գրավելով Կիլիկիայի մեծագույն մասը ու անվերջ պայքարելով եգիպտոսի սուլթանների ոտնձգությունների դեմ, թուրքմեն տիրակալները կարողացան իրենց իշխանությունը: Իսկ պահել երկրամասը ընդհուպ մինչև 1516 թ., երբ Կիլիկիան ընկավ օսմանյան տիրապետության ներքո: Թուրքմեն տիրակալներն այդ ժամանակ իշխում էին նաև Մեծ Հայքում, և եվրոպացի ուղեգիրները երկիրը անվանում էին «Թուրքմենիա»: Նույն բառով է կոչում Կիլիկիան նաև Բերտրանդոն դե լա Բրոկերը: «Երբ ես մեկնեցի Սիրիայից, — գրում է նա, — ես մուտք գործեցի թուրքմենների երկիրը, որին մենք անվանում ենք Հայաստան» (խոսքը Կիլիկիայի մասին է — Մ. Չ): Ուղեգրի վկայություններից երևում է նաև, որ Կիլիկիան հայկական պետություն անկումից հետո էլ քաղաքային կյանքն ու առևտուրը դեռևս լրիվ անկում չէին ապրել: Այսպես, խոսելով Ադանայի մասին, նա գրում է. «Ադանան մի շատ լավ վաճառականական քաղաք է, որը սմուր փակված է պարիսպներով»⁴⁵:

Հեթում պատմիչից հետո, ընդհուպ մինչև XV դարի սկզբները, եվրոպական պատմագրության մեջ աչքի ընկնող գրական հուշարձան չի պահպանվել: Միայն լենկ Թեմուրի ժամանակաշրջանն է, որ իր արտացոլումն է դրել Ռույ Գոնսալեսի դի Կալիխտի «Ուղեգրության» մեջ:

Այսուհանդերձ, պատմական արժեքից զուրկ չեն գերմանացի Հանս Եիլդերգերի⁴⁶ հաղորդած վկայությունները Հայաստանի և հայերի մասին: 1394 թ. ծառայության մեջ գտնվելով Ռուսկոյաթի Սիգիզմունդ թագավորի մոտ, Նիկոպոլիսի նահատաժարտում գերի է ընկնում Բուրբուրի ձեռքն ու սուլթան Բայազետ I-ի կարգադրությամբ ողորկվում է Փոքր Ասիա: 1402 թ. Անկարայի նահատաժարտում գերի է ընկնում Թիմուրի ձեռքը և այնուհետև մասնակցում նրա արշավանքներին: 1417 թ. նա փախչում է գերությունից ու վերադառնում հայրենիք: Լինելով անգրագետ, նա հետագայում թելադրել է իր տեսածն ու վերապրածը: Նրա միամիտ նկարագրությունները պահանջում են խիստ քննադատական մոտեցում ունենալ և առասպելական ու համախառն աղավաղված նյութերից քաղել ճշմարիտն ու պատմականը:

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև իտալացի ֆրանցիսկյան Օգորինիոս Պորդենտեի 1316 թ. Կոստանդնուպոլիս և Տրապիզոնի վրայով Հայաստան կատարած ուղևորության մասին հաղորդած վկայությունները⁴⁷: XIV դարի վերջին Բալկաններում թուրքերի ունե-

⁴² Աշ. Հովհաննիսյան. Դրվագներ..., գիրք Ա, էջ 175:

⁴³ Հեթում պատմիչ թուրքագ. Վենետիկ, 1842:

⁴⁴ Le voyage d'outremer de Bertrand de la Broquière, publié et annoté par Charles Schéfer. Paris, 1892.

⁴⁵ Նույն տեղում, էջ 40:

⁴⁶ Հ. Եիլդերգերի ուղեգրությունը դեռ XV դարում մի քանի անգամ հրատարակվել է Գերմանիայում: 1852 թ. Մյունխենում Կ. Ֆ. Նոյմանը հրատարակում է քննական տեքստը՝ «Reisen in Europa, Asia und Africa von 1394 bis 1427» վերնագրով: Թուրքերի թարգմանությունը հրատարակել է Ֆ. Բրուները (Путешествие Ивана Шильдбергеря по Европе, Азии и Африке с 1394 по 1427.—Записки Новороссийского университета. Т. I, Одесса, 1867): Կա անգլերեն թարգմանությունը (Buchan Telfer. The bondage and travels of John Shiltberger. London, 1878):

⁴⁷ Odoric de Pordenone. Les voyages en Asie au XIV siècle. Paris, 1891.

ցած ռազմական հաջողությունները մեծապես վնասել էին Եվրոպայի և Արևելքի միջև կատարվող առևտրին: Եվրոպական երկրների պարբերաբար կազմակերպած «խաչակրաց» արշավանքները անվերջ պարտություն էին կրում թուրքերից: Բալկանյան երկրների դաշինքին հատկապես մեծ հարված հասցրեց սուլթան Բայազետ Յըլզըրըմը 1396 թ. Դանուբի ափին Նիկոպոլիսի ճակատամարտում: Ահա այս ժամանակ Արևելքում հանդես եկած նոր բռնակալ Թիմուրը, որը 1402 թ. Անկարայի ճակատամարտում ղեկավարել էր ջախջախել էր թուրքական բանակն ու դերի վերցրել Բայազետ սուլթանին, եվրոպացիների կողմից դիտվում էր որպես հնարավոր զաչնակից ղեկավար թշնամու՝ օսմանյան Թուրքիայի դեմ: Ռուլ Գոնսալես դի Կլավիխոն, Կաստիլիայի այդ ազնվականը ծնվել էր Մոդրիդում: Մենդյան ստույգ թվականը հայտնի չէ, մահացել է 1412 թ.: 1403 թ. Կաստիլիայից հրկրորդ ղեկավարությունն ուղարկվեց Թիմուրի մոտ, որին մասնակցում էին Ալֆոնսո Պեդրո դե Սանկոա Մարիան, Կլավիխոն և Գոմես դե Սալասարը, որոնք և 1406 թ. վերադարձան Կաստիլիա:

Կլավիխոն թողել է այդ ճանապարհորդության օրագիրը⁴⁸, Ուղեգիրը 1403 թ. մայիսի 21-ին դուրս է գալիս Կադիսից և Միջերկրական ու Սև ծովերի վրայով ուղևորվում է Կոստանդնուպոլիս, Սիևոպ և Տրապիզոն: Այստեղից նա շարունակում է իր ճանապարհը դեպի Երզնկա, Էրզրում (Arseron), Ալաշկերտ, Իզդիր, Բայազետ, Խոյ, Թավրիզ, Սուլթանիե, Թեհրան և 1401 թ. սեպտեմբերի 3-ին հասնում է Սամարղանդ, ուր հատուկ ընդունելության է արժանանում Թիմուրի կողմից ու մնում այնտեղ մինչև նոյեմբերի 21-ը: Վերադարձին Կլավիխոն, անցնելով Իրանի վրայով, ուղեցելում է Անին, Կարսը, Սպերը, Տրապիզոնը և այլ վայրեր ու քաղաքներ:

Հիշարժան են Մակվում պահպանված հայկական իշխանություններից մեկի մասին Կլավիխոյի հաղորդած վկայությունները. «Կիրակի, հունիսի 1-ին (1404 թ.),— գրում է Կլավիխոն,— մենք հասանք մի բերդ, որ կոչվում էր Մակու, և այդ վայրը պատկանում էր մի իշխանի, որ հռոմեական կաթոլիկ քրիստոնյա էր, բայց անունը նուրազդին էր, և այն դինվորները, որոնք պահպանում էին այս բերդը, նույնպես պատկանում էին հռոմեական կաթոլիկ հայապետին: Նրանք իրականում ազգությամբ հայ էին, խոսում էին հայերեն, բայց միևնույն ժամանակ հասկանում էին թուրքերեն և պարսկերեն: Մակվում ս. Դոմինիկյան միաբանության մի վանք կա»⁴⁹:

1402 թ. Անկարայի ճակատամարտը միայն ժամանակավորապես կանգնեցրեց թուրքերի հետագա առաջխաղացումը Բալկաններում ու հետաձգեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի անկումը: XV դարի 40-ական թթ. օսմանցի թուրքերը վերսկսեցին իրենց զավթողական պատերազմները Եվրոպայի արևելքում: 1444 թ. սուլթան Մուրադ II-ը Վառնայի մոտ ջախջախեց լեհական ու հունգարական բանակները և զրավեց բալկանյան երկրների զգալի մասը, իսկ 1448 թ. Կոստվայի զաշտում վճռական պարտության մատնեց հունգարական վոյեվոդ: Յուրդ Խունիատայի ղեկավարությամբ արևելաեվրոպական երկրներից կազմված դաշնակից բանակը, որից հետո Մուրադ II-ի հաջորդ Մեհմեդ II-ին ոչինչ չէր մնում, քան առանց մեծ արգելքի, նվաճել Կոստանդնուպոլիսը, որը և տեղի ունեցավ 1453 թ. մայիսի 29-ին: Այս բոլոր քաղաքական իրադարձությունները հսկայական վնաս պատճառեցին Եվրոպայի լեհաստանյան առևտրին: Ամենից շատ տուժեցին Վենետիկն ու Ջենովան: Այս երկու քաղաք-հանրապետությունները առևտրական խոշոր կենտրոններ ունեին Կոստանդնուպոլսի Պերա և Ղալաթիա թաղամասերում և այստեղից կատարում էին Արևելքի հետ ողջ առևտուրը: Իտալիայի այս երկու հանրապետությունների համար կորևորագույն առևտրական կենտրոններ էին նաև Տրապի-

⁴⁸ Օրագիրն առաջին անգամ լույս է տեսնում 1582 թ. Գոնսալես Արգոլեդի Մոլինայի շանքերով, հետևյալ վերնագրով. «Vida y Hasanas de Grand Tamerlan... escrita por Ruy Gonzalez de Glavijo... con un itinerrario de la succedito en le embajada. Sevilla, 1582. 1782 թ. այդ գիրքը վերահրատարակվում է, որից և կատարվել է ուսուցիչ թարգմանությունը Рюи Гонзалес де Клавихо. Дневник путешествия ко двору Тимура в Самарканд.. подлинный текст с переводом и примечаниями.—Сборник отделения русского яз. и словесности АН, т. XXVIII, № 1, СПб., 1871): Կա և անգլերեն թարգմանությունը (Glements Markham. Narrative of the embassy of... Clavijo to the court of Timour. London, 1859. Hakluyt series, t. XXVI. Guy de Strange—Clavijo embassy to Tamerlan. London, 1928.

⁴⁹ Հոգև. Հակոբյան. Ուղեգրություններ. Ա, էջ 113:

զոհն ու Կաֆան (Թեոդոսիան) Սև ծովում, որտեղից նրանք իրենց ապրանքները տեղափոխում էին Իրան, մասնավորապես Բավրիդ և այնտեղից էլ ստանում էին Հնդկաստանի ապրանքները Հորմուզի վրայով ու տեղափոխում Եվրոպա: Սակայն շուտով թուրքերը գրավեցին սկզբում Տրապիզոնը (1461 թ.), իսկ այնուհետև, 1475 թ., Դրիմի թերակղզին⁵⁰ ու փակեցին Արևելքի առևտրական ուղիները Եվրոպայի առաջ:

Այս բոլորը ստիպեցին մասնավորապես վենետիկյան զառնակիցներ փնտրել Արևելքում, և այդպիսի զառնակից գտնվեց Հանձինս ակկոյունլու-թուրքմենների ակառավոր տիրակալ Ուզուն Հասանի (1453—1477 թթ.), Վերջինս ոչ միայն սիրալիր ընդունեց վենետիկի դեսպաններ Կատերինո Զենոյին (1471—1474 թթ.), Ջոզեֆո Բարբարոյին (1471—1478) և Ամբրոսիո Կոնտարինին (1473—1477), այլև, իր հերթին, բարեկամական դեսպանություններ ուղարկեց Եվրոպա: Ուզուն Հասանը Եվրոպայի հետ ունեցած իր բանավարություններում օգտագործում էր հայ զինվանագետներին, որոնցից մեկն էր Նախիջևանի շրջանից հայ խոջա Միրաբը՝ Ուզուն Հասանի «հավատարիմ ծառան ու ներկայացուցիչը»⁵¹: Վերոհիշյալ խաղաղի երեք դեսպանները գրի են առել այն քաղաքական իրադարձությունները, որոնց ակառավոր են եղել իրենց Հանապարհորդությունների ընթացքում. այդ գրառումները պատմական որոշակի արժեք են ներկայացնում: XV դարի 70-ական թթ., երբ ռազմական գործողություններ էին գնում մի կողմից Ուզուն Հասանի դուրքերի, մյուս կողմից՝ թուրքերի միջև, օսմանցիների բանակում էր գտնվում մի ուրիշ վենետիկցի՝ Ջիովաննի Մարիա Անջելիլոն, որի թողած պատմական վկայությունները նույնպես խիստ ուշագրավ են:

Կատերինո Զենոն ամուսնացած էր Կալոյոաննես կայսեր Վիոլետա թոռան հետ, հետևաբար Ուզուն Հասանի Դեսպինա կնոջ մոտիկ ազգականն էր: 1474 թ. վերադառնալով վենետիկ, Զենոն ծերակույտին է ներկայացնում Արևելք կատարած ուղևորության մասին իր զեկուցագիրը⁵², որտեղից պարզվում է, որ խաղաղական դեսպանների հետ բանակցությունների ընթացքում Ուզուն Հասանի հետ կայացել էր զինական զառնակցություն, և որ գործող զառնակից զորքերը պետք է հանդիպեին Կարամանիայում: Սակայն այդ զառնիքին չէր վիճակված կայանքում իրականանալ, բանի որ 1473 թ. օգոստոսի Դերջանի ճակատամարտը ավարտվել էր հօգուտ թուրքերի ու դրանով իսկ կանխորոշել այդ զառնիքի հետագա ճակատագիրը:

Ջոլեֆո Բարբարոն ծնվել է վենետիկում XV դարի սկզբին ու մահացել 1493 թ., 1436—1452 թթ. ապրել է Տանայում (Ադով)՝ իր առևտրական գործարքների համար ու մոտիկից ծանոթացել արևելյան ժողովուրդներին: 1471 թ. Ջ. Բարբարոն մեկնել է Իրան՝ Կիպրոսի, Կիլիկիայի, Եփրատի վրայով դեպի Թավրիզ, Սուլթանիե և Իսպահան: Վերադառնալիս նա եղել է Քավրիզում, Շամախիում, Դերբենդում, իսկ այնուհետև մեկնել է Մոսկվա և Լեհաստանի ու Գերմանիայի վրայով հասել հայրենիք⁵³:

Ջ. Բարբարոյի «Ուղեգրությունը» ներկայացնում է նրա «Օրագրի» հետագա մշակումը: Նա հանդես է գալիս մերթ օրոքեան անմիջական ականատես, մերթ՝ օրպես իր լսածների գրառող: Բացի Կիլիկիայի մասին թողած հիշատակություններից, առաջին արժեքավոր է Թավրիզի մինչև Դերբենդ ընկած տարածության նկարագրությունը: Նա տալիս է աշխարհագրական միջնաձայրի, բնակչության թվական կազմի, սովորույթների ու բարքերի, քաղաքական պատմության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ: Գտնվելով Ուզուն Հասանի բանակում, նա մաս-

⁵⁰ Դրիմի թերակղզում, ինչպես հայտնի է, XIII—XV դդ. մեծ էր հայերի թիվը: Զենովյանների հետ նրանք գտնվում էին մշտական առևտրական և այլ առնչությունների մեջ: Այդ տեսակետից որոշակի գիտական արժեք է ներկայացնում Վ. Ա. Միրայելյանի «Հայ-իտալական առնչություններ. ջենովական փաստաթղթերը դրիմահայերի մասին» գիրքը (Երևան, 1974 թ.):

⁵¹ Ղ. Ալիշան. Հայ-վենետ. վենետիկ, 1896, էջ 186—187:

⁵² Կատերինո Զենոյի զեկուցագիրը առաջին անգամ լույս է տեսել վենետիկում 1558 թ. (տե՛ս Del commentarii del viaggio in Persia Caterino Zeno). Կա նաև անգլերեն թարգմանությունը (տե՛ս Hakluyt series № 11):

⁵³ Ջ. Բարբարոյի «Ուղեգրություն» առաջին անգամ լույս է տեսնում վենետիկում 1453 թ., վերահրատարակվում է 1545 թ. հետևյալ վերնագրով. Viaggi fatti da Venetia alle Tana in Persia, India et in Constantinopli con la descrizione di Citta, luoghi, siti, costumi et della Porto del Gran Turco. Հետագայում կատարվել է լատիներեն (1606 թ.) և ռուսերեն (1831 թ.) մասնակի թարգմանությունը (դեպի Տանա ուղևորության նկարագրությունը):
⁵⁴ «Հանդես», X 2

նակցել է թուրքմենական տիրակալի 1477 թ. Վրաստան կատարած արշավանքին և նկարագրում է այն:

Ամբողջիտ Կոնստանդինոպոլիսի Իրան ուղևորվեց Դերմանիայի, Լեհաստանի, Ղրիմի, Վրաստանի և Հայաստանի վրայով: Բաթումից մինչև Թավրիզ Կոնստանդինոպոլիսի ուղևորությունը տևում է 1474 թ. հունիսի 29-ից մինչև օգոստոսի 4-ը: Իսպահանում Կոնստանդինոպոլիսի հանդիպում է Ջ. Բար-րաորդի Վևա և նույնմբերի 4-ին երկուսով արժանանում են Ուզուն Հասանի ընդունելությանը: Պաշտարանին նպատակադրվել էր հայրենիք վերադառնալ նույն ճանապարհով, որով մեկնել է Իրան, սակայն Բաթումի մոտերքում իմանալով թուրքերի կողմից Ղրիմի գրավման մասին (1475 թ.), ստիպված է լինում վերադառնալ Թբիլիսի և Շամախիի, Դերբենդի վրայով շարժվում է դեպի Աստրախան, այստեղից էլ Ռուսաստանի, Լեհաստանի, Դերմանիայի վրայով 1477 թ. ապրիլի 10-ին հասնում է Վենետիկ:

Ա. Կոնստանդինոպոլիսի «Ուղեգրությունը»⁵⁴ հար և նման է Ջ. Բարբաորդի նկարագրածին, սակայն է մեծապես տարբերվում է նրանից: Բարբաորդի «Ուղեգրությունը» — գրում է Մ. Ա. Պոլիսկատովը, — ավելի շուտ հանդիսանում է ճանապարհորդության ընթացքում իր հավաքած նյութերի, ինչպես նաև ուրիշ մարդկանցից ստացած տեղեկությունների մշակումը, հետևաբար ամեն պարագայում հեշտ չէ առանձնացնել, որտեղ է Բարբաորդ խոսում որպես ականատես և որտեղ ուրիշի խոսքերով: Կոնստանդինոպոլիսի «Ուղեգրությունը» իր ուղեգրության օրագիրն է, ուր նա բերում է համարյա բացառապես իր անձնական տպավորությունները⁵⁵:

Ա. Կոնստանդինոպոլիսի ճանապարհորդում է հետաքրքիր տեղեկություններ իր այցելած Վալերի մասին: Ուղեգիրը, որպես ջերմեռանդ հումնադավան, իդեալական գծերով է ներկայացնում Նախիջևանի շրջանի՝ կաթոլիկ հայերով բնակեցված տասնմեկ գյուղեր, որոնք, իր բառերով՝ առած՝ «ամենահաճելի ու ամենաարգասիքն են ողջ Պարսկաստանում»⁵⁶: Ուղեգրության մեջ բերված են Հայաստանի քաղաքական պատմության վերաբերող տվյալներ: Այսպես, Ուզուն Հասանը մի առիթով ասել է Ա. Կոնստանդինոպոլիսի. «Ասեք ձեր ղեկավարներին, որ ես շուտով ռազմական գործողություններ կտեղափոխեմ Ոսմանյան կայսրության տարածքը. թող նրանք իրենց կողմից կատարեն իրենց (հանձն առած) պարտականությունը, ինչպես ես անում եմ իմը»⁵⁷:

Դտնվելով Մեհմեդ II-ի՝ Ուզուն Հասանի վրա արշավանք ձեռնարկած բանակում, Զիռվանին Մարիա Անջլուկլուն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում թուրքական բանակի մարտունակության, կազմի, ռազմական տեխնիկայի մասին:

1475 թ. Դերբանի ճակատամարտի մասին արժեքավոր տվյալներ բերելուց հետո, Անջլուկլուն խոսում է Ուզուն Հասանի հետագա ճակատագրի, 1477 թ. նրա մահվան, ակնույնությունների պետության մեջ ծալք առած զահակալական կոիլների մասին և այլն: Ուղեգրությունը Սեֆյանների պետության հիմնադրման պատմության կարևոր աղբյուրների շարքի է դասվում: Այնտեղ խոսվում է Սեֆյանների պետության հիմնադիր Շահ Իսմայիլի՝ 1501—1510 թթ. ընթացքում իրանում և Արևմտյան Հայաստանում ծավալած ռազմական գործողությունների մասին⁵⁸:

Քանի որ խոսք գնաց Շահ Իսմայիլի ժամանակաշրջանի մասին, նշենք, որ նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ ամենահետաքրքիր նյութերը պարունակում է Իրան մեկնած մի տեհալտ վաճառականի թողած «Ուղեգրությունը»: Հեղինակը իր մասին ասում է, թե ինքը իր շարադրած նյութերն Արևելքի ժողովուրդների կենցաղի, սովորույթների և այցելած քաղաքների մասին հավաքել է ութ տարիների և ութ ամիսների ընթացքում:

⁵⁴ Ա. Կոնստանդինոպոլիսի «Ուղեգրությունը» առաջին տպում է լույս տեսնում Վենետիկում 1487 թ. հետեյալ վերնագրով. Viaggio di Messer Ambrosio Contarini, ambasciadore di Venezia ad Uzun Cassan Re di Persia per Annibale Fosco, Venezia 1487. Կա ֆրանսերեն խաղաղամասնությունը Պ. Բերթերոնի կողմից, որից է մենք օգտվել ենք:

⁵⁵ М. А. Полневков. Европейские путешествия XIII—XVIII вв. по Кавказу, с. 98.

⁵⁶ Pierre Bergeron. Op. cit., chap. III, p. 21.

⁵⁷ Նույն տեղում, էջ 30:

⁵⁸ Հոփհ. Հակոբյան. Ուղեգրություններ, էջ 276—285:

Այդ նյութերը իրենց թարմությամբ մեծապես կարող են հետաքրքրել ընթերցողներին: Նա գրում է նաև, որ ինքը մասնակցել է Շահ Իսմայիլի մի շարք արշավանքներին⁵⁹:

Անհայտ վաճառականի դեպի Իրան կատարած ճանապարհորդությունը ընթացել է Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններով (Դիարբեքիր, Մերդին), որոնց մասին նա թողել է տնտեսական ու դեմոգրաֆիկ բնութիվային վկայություններ. խոսում է նաև Շահ Իսմայիլի զորավար Ուստաջու Խանի կողմից այդ շրջանների գրավման մասին: Հատկապես գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում Բիթլիսին, Վանին, Ուստանին, Դատվանին, Արճեշին և հարավարևմտյան Հայաստանի այլ քաղաքներին ու զավառներին նվիրված վկայությունները, որոնք գերադասապես վերաբերում են քուրդ բեկերի և Շահ Իսմայիլի քաղաքական հարաբերություններին: Ընդարձակ են հեղինակի թողած տեղեկությունները Մերձավոր Արևելքի խոշորագույն առևտրական կենտրոններից մեկի՝ Թավրիզի մասին: Դրանք որոշակի գիտական նշանակություն ունեն տվյալ ժամանակաշրջանի տնտեսական պատմության ուսումնասիրության համար:

Սեֆյան պետության հիմնադրման պատմությունը, ակնյայտում պետության վերջին տիրակալների, շիրվանշահերի և օսմանյան թուրքերի դեմ Շահ Իսմայիլի պայքարի պատմությունը իր արտացոլումն է գտել նաև վենետիկյան դիվանագետ Ուոտայի թողած հիշատակարանում, որը գետնգլած է Ռ. Դյու Մանի «Պարսկաստանի վիճակը 1660 թ.» գրքի հավելվածում⁶⁰: Իր աշխատության սկզբնական մասում Ռոտան տալիս է Սեֆյան հարստության ծագումնաբանությունը, այնուհետև տալիս է իրեն՝ Շահ Իսմայիլի կենսագրությունը: Իշխանության գլուխ անցնելուց հետո, Շահ Իսմայիլը, — վկայում է Ռոտան, — «...մեծ ատելություն է տածում դեպի թուրքերը»⁶¹: Այնուհետև Ռոտան պատմում է Շահ Իսմայիլի մղած պատերազմների ու նվաճած երկրների մասին: Ռոտան հատուկ ընդգծում է, որ Շահ Իսմայիլի հեղինակությունը, գլուխացնելով ու սոցիալական այլ շերտերի նկատմամբ վարած խաբեպատիր քաղաքականության շնորհիվ, մեծ էր երկրում: «Իր պալատականների ու իր ենթակաների կողմից նա (Շահ Իսմայիլը—Մ. Զ.) պաշտված է, որպես մարգարե, և ինքը ավելի մեծ հեղինակություն ձեռք բերելու համար (մարդկանց մեջ) ներկայանում է միայն դեմքը շղարշով քողարկված, ինչպես դա մի ժամանակ անում էր Մովսես (մարգարեի) Իսրայելի զավակների առաջ»⁶²: Ռոտան իր աշխատության վերջին գլուխը վերնադրել է այսպես. «Սչին մեծ ատելությունը, որ տածում է իշխան Ուոֆին դեպի հրեաները, թուրքերը և սարապիկեոսները (իմա՝ սրբերը—Մ. Զ.), և թե ինչպես նա համակրում է քրիստոնյաներին...», որտեղից պարզվում է, որ Շահ Իսմայիլի թշնամանքն ուղղված էր սուրհմիների դեմ և քրիստոնյաներին «հովանավորելը» պայմանավորված էր եվրոպական պետությունների հետ թուրքերի դեմ ուղղված զաշինք կնքելու նպատակով: «Ջրիստոնյաներին, — կարդում ենք Ռոտայի մոտ, — նա (շահը—Մ. Զ.) ցույց է տալիս բարյացակամ (վերաբերմունք), որովհետև նա անձնամիտ էր թողնում նրանց բոլոր եկեղեցիներն ու մատուռները՝ առանց բռնությամբ դիպչելու: Եվ տանում էր իր հետ հայոց պատրիարքին և մեր հավատին հետևող բողոքական վանականների և հոգևորականների, որանով իսկ ակնհայտ դարձնելով մահմեդական օրենքը (իմա՝ սուրհմիզմը—Մ. Զ.) հիմնովին ոչնչացնելու նրա ցանկությունը»⁶³:

XV դարի եվրոպական պատմագրության մասին մեր խոսքը ավարտելուց առաջ նշենք ևս մի երկու կարևոր բյուզանդական աղբյուրների մասին, որոնք XVII դարում հրատարակվել են Ֆրանսիայում այլևայլ աղբյուրներից քաղված խիստ արժեքավոր լրացումներով: Առաջինը բարոն դե Գիլիի կողմից հրատարակված է՝ «Մեհմեդ II-ի պատմությունը» վերնագրով⁶⁴: Հատկապես հայ ժողովրդի քաղաքական պատմության համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում երկրորդ հատորը, որը բացառապես նվիրված է Մեհմեդ II-ի, Ուզուն Հասանի ու այլոց հետ ունեցած պարզություններին: Նամակներից մեկում սուլթանը մանրամասն նը-

⁵⁹ Նույն տեղում, էջ 285—287:

⁶⁰ «Estat de la Perse en 1660» par le P. Raphael du Mans, publié avec notes et appendice par Charles Schéfer. Paris, 1890, Appendice, p. 259—276.

⁶¹ Նույն տեղում, էջ 264:

⁶² Նույն տեղում, էջ 264—265:

⁶³ Նույն տեղում, էջ 274—275:

⁶⁴ Histoire du règne de Mahomet II, empereur des Turcs par le sieur Guillet. T. I—II, Paris, 1684.

կարագրում է Դերջանում իր տարած հաղթանակը Ուզուն Հասանի նկատմամբ: Երկրորդ հատորի վերջում բերված են նաև աղբյուրներ, ուր խոսք է գնում Սեֆյանների ծագման մասին:

Իրկորոջ աղբյուրը, որի մասին այստեղ ակնարկեցինք, Լաոնիկոս Խալկոկոնդիլի կամ Խալկոնդիլի (ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն. ենթադրվում է, որ նա ծնվել է XV դարի 30-ական թթ. ու մահացել նույն հարյուրամյակի վերջում)⁶⁵ «Թուրքերի և Մեհմեդ II-ի ծագման ու գործունեության մասին» վերնագրով աշխատությունն է: Այստեղ մանրամասն շարադրված է օսմանյան պետության քաղաքական պատմությունը 1293—1463 թթ., կարճ՝ տրորված է թուրքերի կողմից Փոքր Ասիայում և Բալկաններում կատարած նվաճումների պատմությունը⁶⁶, Կա Բլեզ դե Վիլենների կատարած ֆրանսերեն թարգմանությունը, որին կցված են Բոմաս Արթուսի և դե Մեզերեի կողմից կատարված ժամանակագրական լրացումները ընդհուպ մինչև 1661 թ.:

XVI դարում, երբ Օսմանյան կայսրությունը հասնում էր իր հզորության գագաթնակետին, եվրոպական պետությունների մոտ առավել ուժեղացավ հետաքրքրությունը դեպի այդ պետությունը, որի անմիջական արդյունքն էր պատմական մեծ ու փոքր աշխատությունների հրապարակում: Եվրոպայում: Միայն XVI դարի առաջին կեսին եվրոպական հասարակությանը հայտնի դարձան 901 նման աշխատություններ, որոնց համառոտ նկարագրությունը տրված է գերմանացի արևելագետ Կարլ Դյուլերի 1961 թ. Բեռլինում ու Բուխարեստում հրատարակված գրքում⁶⁶, Այս ժողովածուում մատնացույց արված աղբյուրների մեջ հայ ժողովրդի պատմության տեսակետից առավել հետաքրքրություն են ներկայացնում 1535 թ. «Մեծ Թուրքի (իմա՝ սուլթանի—Մ. Զ.) նկատմամբ Սոֆիի տարած հաղթանակի մասին Կոստանդնուպոլսից ուղարկված մի նամակի պատճենը», իտալացի Զիովիի (Պաոլո) 1538 թ. ֆրանսերեն թարգմանված ու Փարիզում հրատարակված հետևյալ վերնագրով աշխատությունը. «Թուրքիայի կայսրների պատմությունը. վերջերս լատիններենից ֆրանսերեն թարգմանված»⁶⁷ և 1547 թ. դարձյալ Փարիզում հրատարակված «Կոստանդնուպոլսից ուղարկված նամակների պատճենը, որը պարունակում է Պարսկաստանի թագավոր Սոֆիի մեծ Թուրքին վերջերս հասցրած մեծ պարտությունը...»⁶⁸ գրքերը: Կարլ Դյուլերի կողմից հրատարակված աղբյուրների ցանկից երևում է, որ Թուրքիայի մասին եվրոպա ուղարկված նյութերի մեծ մասը գրված է լատիններեն:

Եվրոպական պետությունների հետ Օսմանյան կայսրության հարաբերությունները XVI դարում դարձան ավելի կայուն: Իրար նկատմամբ թշնամական դիրք գրաված եվրոպական պետությունների տարբեր խմբավորումներ աստիճանաբար սկսեցին իրենց կողմը գրավել Թուրքիային: Մյուս կողմից, թուրքական վտանգը եվրոպայի կենտրոնից հեռացնելու նպատակով, եվրոպական պետությունները սկսեցին կանոնավոր դեսպանություններ ուղարկել Կոստանդնուպոլիս: Ավելի ու ավելի հաճախ տարբեր մասնագիտությունների տեղ եվրոպացիներ սկսեցին ուղևորություններ կատարել Թուրքիայում: Եվ ահա դեսպանությունների զեկուցագրերը և առանձին ուղեգրությունները բավականին պատմական նյութեր են հաղորդում Օսմանյան կայսրության հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության մասին: Այս նյութերից միայն մի մասն է առ այսօր հրապարակված, մյուսը, դժբախտաբար, մնում է դեռևս եվրոպայի տարբեր երկրների արխիվներում: Մասնակիորեն հրատարակված նյութերի շարքին կարելի է դասել 1839—1846 թթ. ընթացքում Ե. Ա. Ալբերիի կողմից լույս ընծայված «Սենատին հղված վեներտիկյան դեսպանների զեկուցագրերը» վերնագրված փաստաթղթերի ժողովածուն⁶⁹: Այդ փաստաթղթերը արտացոլում են 1527—1577 թթ. Արևելքում Ֆրանսիայի վարած քաղաքականությունը:

⁶⁵ [Chalcondyle]. Histoire générale des turcs, contenant l'histoire de Chalcondyle, trad. de Blaise de Vigenaire et continuée jusque en l'an 1612 par Thomas Artus et par le sieur Meseray jusque en l'an 1661. T. I—II, Paris, 1662.

⁶⁶ Karl Gölnner. Turcica, Die europäischen Türkendrucke des XVI Jahrhunderts. Band I, Bucuresti—Berlin, 1961.

⁶⁷ Giovinio (Paulo). L'histoire des empereurs de Turquie... Nouvellement traduit de latin en françois. Paris, 1538.

⁶⁸ La copie des lettres envoyées de Constantinople qui contiennent la grande deffaicte que nouvellement Sophy Roy de Perse a taict contre le grand Turc. Traduite de langage italien en françois. Paris, 1547.

⁶⁹ E. Albéry. Relazioni degli ambasciatori Veneti al Senato. T. III, Firenze, 1859—1863.

Համանման փաստաթղթերի մի ժողովածու, որն ընդգրկում է 1515—1580 թթ. ժամանակաշրջանը, պարունակում է նաև 1848—1853 թթ. է. Շարիերի կողմից հրատարակված շորս հատորանոց գիրքը⁷⁰:

XVI դարի 40-ական թթ. հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ֆրանսիական թագավոր Հենրիխ II-ի գեսպան դ'Արամոնի ուղեգրությունը⁷¹, նա 1548—49 թթ. մասնակցում էր սուլթան Սուլեյման Կանունիի (1520—1566 թթ.) իրանական արշավանքին ու օրը օրին նկարագրում է այդ արշավանքի ողջ ընթացքը: Նա արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ամասիայի, Թոխատի, Սեբաստիայի, էրզրումի, Վանի, Մուշի, Բիթլիսի, Դիարբեքիի, Նդեսիայի և պատմական Հայաստանի մյուս բազմաքանակի մասին: Դ'Արամոնի հաղորդած վկայություններից ևս մի անգամ պարզվում է այն իրողությունը, որ արշավող թուրքական բանակի սարսափից բնակչությունն ստիպված լքում էր իր հայրենի երկիրը: Ֆրանսիական դեսպան դ'Արամոնի վկայությունները գրի է առել իր քարտուղար Ժան Շեզնոն: Բնագիրը հրատարակել է ֆրանսիացի հայտնի արևելագետ պատմաբան Նաոլ Շեֆերը, որը գրքին կցել է առաջաբան, ծանոթագրություններ և ֆրանսիական արխիվային նյութեր, որոնց թվում սուլթան Սուլեյմանի 1549 թ. Հենրիխ II-ին հղած նամակը, ուր սուլթանը մասնավորապես նկարագրում է Շահ Թահմասպի հետ իր պատերազմները և թուրքական բանակի հարձակումը Ղեպի Վրաստան:

XVI դարի 50—60-ական թթ. Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից մասնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև թելզիացի դիվանագետ Օմիե Դիսլեն վան-Բուսբեկի (1522—1592) թողած հուշագրությունները⁷²: Բուսբեկը, որպես ավստրիական կայսր Ֆերդինանդ I-ի դիվանագիտական ներկայացուցիչ, 1553 թ. ուղարկվեց Թուրքիա՝ հաշտություն կնքելու նպատակով, ուր նա մնաց մինչև 1552 թ.: Թուրքիայի մասին իր տպավորությունները Բուսբեկը շարադրեց շորս ընդարձակ ղեկուցագիր-նամակների ձևով, որոնք 1589 թ. առաջին անգամ լույս տեսան ֆրանսերեն լեզվով: Այնուհետև այդ աշխատությունը հրատարակվում է նաև եվրոպական այլ լեզուներով:

Նույն դարի 70-ական թթ. մեզ հետաքրքրող աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում շահ Թահմասպի իշխանության վերջին տարիների Իրանի ներքին կացության վերաբերյալ Վենետիկի Հանրապետությանը իրաւացի Վինչենցո դ'Ալեսանդրիի հղած ընդարձակ ղեկուցագիրը⁷³: 1571 թ., երբ թուրքերը սպառնում էին Կիպրոսին, Վինչենցո դ'Ալեսանդրին Վենետիկի Հանրապետության կողմից ուղարկվեց Իրան՝ հորդորելու շահ Թահմասպին համատեղ հանդես գալ Թուրքիայի դեմ: Ահա Վինչենցո դ'Ալեսանդրիի Վենետիկ հղած վերոհիշյալ տեղեկագիրը հանդիսանում է հեղինակի՝ Իրանում երկար ժամանակ ապրելու ու շահական պալատի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ շփվելու անմիջական արդյունք: Իրանի և Արեւելյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքին վերաբերող արժեքավոր վկայություններից բացի, Վ. դ'Ալեսանդրիի մոտ տվյալներ կան XVI դարի 70-ական թթ. Բիթլիսի բուրջ կառավարիչ էմիր Շարաֆի ապստամբության ու թուրքերի կողմն անցնելու և այս առթիվ՝ տեղեկություններ նաև Բիթլիսի, Վանի, Ոստանի, Բերկրիի, Արճեշի, Արծվեի և հարավային Հայաստանի այլ քաղաքների մասին⁷⁴:

XVI դարի 70—90-ական թթ. անգլիական առևտրական կապիտալը ամենաեռանդուն ձևով սկսեց իր պայքարը Արևելքում եվրոպական մյուս պետությունների ներկայացուցիչների դեմ՝ առևտրի բնագավառում առանձնաշնորհումներ ձեռք բերելու նպատակով: Մշտապես զարգացող անգլիական արդյունաբերության համար առանձնակի հետաքրքրություն էր ներկայաց-

⁷⁰ Ernest Charrière. Négociations de la France dans le Levant ou correspondances, mémoires et actes diplomatiques des ambassadeurs de France a Constantinople. Vol. I—IV, Paris, 1848—1853.

⁷¹ Le voyage de Monsieur d'Aramon, ambassadeur pour le roy en Levant, escrit par le noble homme Jean Chesneau, l'un des secrétaires dudit seigneur ambassadeur. Publiè et annoté par M. Ch. Schéfer. Paris, 1887.

⁷² Busbequis Augier—Guislain (Baron de Busbec). Lettres, traduites en français avec les notes historiques et géographiques par M. L'abbé de Froy. T. I—II, Paris, 1748.

⁷³ Տե՛ս 2-րդ հ. 2-ական շորս. Ուղեգրություններ, էջ 331—354:

⁷⁴ Նույն տեղում, էջ 338:

նույն իրանի համ մետաքսը՝ բոժոժը: Ե՛վ հայկական բամբակը, և՛ իրանական մետաքսը ներմուծման դարեւորագույն ապրանքներն էին դառնալու: Անգլիայի համար: Անգլիացիներն առաջինն էին, որ Ջ. Բարրարոյից ու Ա. Կոնտարինիից հետո իրենց ուշադրությունը սեւեռեցին Վուդա-Կասպիական առևտրական ուղու վրա: XVI դարի կեսերին վուդյան ուղին, ընդհուպ մինչև Աստրախանը ներառյալ, անցել էր Մոսկովյան պետության գերիշխանության ներքո: Ուստի անգլիացիները շտապեցին ուսանելի հետ առևտրական գործարքներ կնքել: Այդ գործի առաջամարտիկը հանդիսացավ անգլիացի նավագնաց Անտոնի Ջենկինսոնը, որը 1557—1571 թթ. ընթացքում Վուդա-կասպիական առևտրական ուղիով ճանապարհորդություն կատարեց Բուխարա և Իրան: Հետագայում Ա. Ջենկինսոնի ձեռնարկած այս գործը շարունակեցին անգլիական առևտրական կապիտալի մյուս ներկայացուցիչները, որոնց թվում էլուրրոուն, Չափմանը, Էդվարդը, Ջոնսոնն ու այլք: Անգլիացիներին հաջողվեց ոչ միայն ձեռք բերել, ինչպես նշվեց, Վուդա-կասպյան առևտրի մենաշնորհը, այլև ազատ իրավունք՝ իրանական ապրանքները առանց որևէ մաքսի Ռուսաստանի վրայով Անգլիա փոխադրելու:

Վուդա-կասպիական ուղիների յուրացմանը զուգընթաց, անգլիական առևտրական կապիտալը ձգտում էր իր համար տեղ ապահովել այսպես կոչված լեանտյան ավանդական ուղիներում: Դեռևս 1555 թ. նույն ինքը՝ Ա. Ջենկինսոնը, սուլթան Սուլեյման Կանունիից ստացավ հատուկ առևտրական արտոնագիր, որով անգլիացիները դասվում էին «...առավել առանձնաշնորհյալ ազգերի» թվին⁷⁵: Այդ արտոնագիրը հետագայում դարձավ ապագա անգլիական կապիտալիստների հիմքն ու լեանտյան ընկերության հիմնադրման սկիզբը⁷⁶: Այդ բոլորը իրավական ձևակերպում ստացավ անգլիական թագուհի Ելիզաբեթի և սուլթան Մուրադ III-ի միջև կնքված հատուկ պայմանագրով: Երկու կողմերն էլ փորձեցին այդ առևտրական պայմանագրին տալ քաղաքական բնույթ⁷⁷: Անգլիական առևտրական կապիտալի համար բարենպաստ այս պայմաններում 1599—1600 թթ. առաջինը Թուրքիա ուղևորվեց Թոմաս Դալլամը, որի ուղեգրությունը⁷⁸ սույն թեմայի համար նույնպես ներկայացնում է որոշակի արժեք:

Հայ մոզովորի պատմության հարցերը ուսումնասիրողների համար առավել հետաքրքիր են Ա. Ջենկինսոնի ընդարձակ ուղեգրության այն էջերը, որոնք վերաբերում են Իրանի ներքին կացության նկարագրությանը և նրա առևտրական հնարավորություններին: Չնայած Ա. Ջենկինսոնը հիշատակում է իր հաղորդում: Իրանի վերաբերյալ Ա. Ջենկինսոնի հաղորդած վկայությունները արժեքավոր են Արևելյան Հայաստանի ընդհանուր վիճակը հասկանալու առումով: Այդ տեղեկությունները ամենից շատ իրենց արտահայտություն են գտել 1561—1563 թթ. ընթացքում Իրան կատարված ուղևորության հուշագրություններում: 1561 թ. հունիսի 1-ին դուրս գալով Աստրախանից, Ա. Ջենկինսոնը Դերբենտի, Շամախիի, Թավրիզի վրայով նոյեմբերի 2-ին ժամանում է Ղազվին, շահ Թահմասպի նստավայրը: Վերջինը, նկատի ունենալով թուրքերի հետ կնքված հաշտության պայմանագիրը, նպատակահարմար է համարում անգլիացիներին շտալ որևէ առևտրական առանձնաշնորհում: Հետագայում, սակայն, ինչպես շահ Թահմասպը, այնպես էլ նրա հաջորդները, անգլիացիներին տալիս են նման առանձնաշնորհումներ:

Ա. Ջենկինսոնի հաղորդած վկայությունները հիմնականում վերաբերում են Իրանի արևմտեկությամբ ու առևտրին, սակայն կան նաև քաղաքական պատմությանը, մասնավորապես թուրք-իրանական պատերազմների վերաբերող նյութեր: Այսպես, խոսելով Թավրիզի մասին, նա գրում է, որ Իրանի մեծագույն քաղաքը «...չունի այն առևտուրը կամ վաճառականությունը, ինչ որ նայապես ունի, կամ ինչպես ուրիշ [քաղաքներ] են այս ժամանակ, թուրքական արշավանքների պատճառով, որոնք Նոֆիից գրավել են գրեթե մինչև հիշյալ Թավրիզ քաղաքը»⁷⁹:

⁷⁵ Early voyages and travels in the Levant. London, 1893, Introduction, p. V.

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Նույն տեղում, էջ 1—68:

⁷⁹ Հոգ. Հակոբյան. Ուղեգրություններ, էջ 378: Ընդհանրապես ներկա աշխատության մեջ օգտագործել ենք Հովհ. Հակոբյանի թարգմանությունը: Ա. Ջենկինսոնի Ռուսաստան և Իրան կատարած ուղեգրության մասին տե՛ս նաև Early voyages and travels to Russia and Persia by Anthony Jenkinson and other Englishmen. Vol. I—II, Edited by E. Delwar Morgan and C. H. Coste. London, 1886.

XVI դարի վերջի Իրանի տնտեսությանն ու քաղաքական պատմությանը վերաբերող նյութերը կարելի է հանդիպել նաև Ա. Ջենկինսոնի գործերից՝ Արթուր Էդվարդսի, Լորենս Չափմանի, Ջոն Սպարբի, Թոմաս Բանիստորի ու այլոց իրանյան ուղեգրություններում, որոնք նույնպես թարգմանված են հայերեն շուրջ⁸⁰։ Այս հեղինակների մոտ խոսվում է նաև Եվրոպայի ու մասնավորապես Վենետիկի հետ Ջուզեպե հայ խոջանների ունեցած առևտրական հարաբերությունների մասին։ Ինչպես երևում է անգլիացի այս ուղեգիրների հաղորդած վկայություններից, անգլիական առևտրի ներկայացուցիչները ուղիներ են փնտրել խանգարելու հայ խոջանների և Վենետիկի միջև ծավալված ապրանքափոխանակությանն ու տիրանալու Իրանի հում մետաքսի արտահանման մենաշնորհին։ Բայց և այնպես, խիստ վախճեցել են Արևելքում առևտրական հարաբերությունների համար գոյություն ունեցող բազմաթիվ խոչընդոտներից այն աստիճան, որ նրանք բացականչում են. «...ավելի լավ է ամբողջ կյանքում մշտապես մնալ մուրացկան Անգլիայում, քան լինել հարուստ վաճառական»⁸¹։ Իրանում։

Վերջապես XVI դարի վերջին քառորդին է վերաբերում անգլիացի մի ուրիշ վաճառահանի՝ Ջոն Նյուբերիի թողած ուղեգրությունը, ուր նույնպես հանդիպում ենք հայերի և Հայաստանի մասին ուղադրավ վկայությունների։ Ջոն Նյուբերին որի է առնչություն չի ունեցել անգլիական մոնոպոլիան րնկերության հետ։ Նա 1581—1582 թթ. բնթացքում առևտրական նպատակներով հասնալարհորդել է Իրան և Հնդկաստան։ Վերադարձին 1581—1582 թթ. ձմռան ամիսներին եղել է Հայաստանում և ուղեորվել դեպի Թոխաթ։ Թավրիզից մինչև Թոխաթ ուղեգրության թուրքամոլությունը դարձյալ տրված է շուրջ⁸²։ Հակոբյանի կողմից⁸²։

Շահ Թահմասպի մահից հետո Իրանում ծայր առած զահակալական կոիվները առժամանակ դադարեցրին դիվանագիտական այն բանակցությունները, որ վարում էին եվրոպական պետությունները Իրանի հետ՝ վերջինիս հակաթուրքական դաշինքի մեջ ներգրավելու նպատակով։ Դարավերջին, սակայն, երբ Իրանում իշխանության գլուխ է անցնում Շահ Աբասը, որի ժամանակ ոչ միայն վերջ է տրվում զահակալական կոիվներին, այլև սանձահարվում են կենտրոնախույս ուժերը, եվրոպական պետությունների հակաթուրքական դաշինք կնքելու նախաձեռնությամբ հանդես է գալիս Անգլիան։ Պայքարելով Վենետիկի դեմ իրանական հում մետաքսի արտահանությունն իր մենաշնորհը դարձնելու նպատակով, Անգլիան ձգտում էր ամեն կերպ վերացնել այն բոլոր խոչընդոտները, որ հարուցում էր Թուրքիան իրանական մետաքսի արտահանության առաջ։

1599 թ. Շահ Աբասի պալատում հայտնվեց անգլիացի սըր Անտոնի Շիրլեյը, որն առաջարկում էր իր պինդորական ծառայությունները Իրանին։ Անգլիական կառավարության ներկայացուցիչների կողմից Անտոնի Շիրլեյը ուղարկվել էր Իրան՝ համոզելու Շահ Աբասին մտնել հակաթուրքական դաշինքի մեջ ու անգլիական հպատակներին որոշ առևտրական առանձնաշնորհումներ տալ։ 1598 թ. մայիսի 24-ին իր եղբոր՝ Ռոբերտ Շիրլեյի ու այլոց հետ նա մեկնեց Վենետիկից և ուղեորվեց դեպի Իրան։ Այստեղ Շահ Աբասի հորավար Ալլահվերդի խանի միջնորդությամբ Շահ Աբասը տվեց իր համաձայնությունը հակաթուրքական դաշինք ստեղծելու մասին։ Նա լիազորեց Անտոնի Շիրլեյին իր անունից բանակցություններ վարելու գերմանական կայսր Ռուդոլֆի, Հոռմի պապի, Վենետիկյան Հանրապետության և իսպանական թագավորի հետ։ Նա Անտոնի Շիրլեյի հետ եվրոպայի ուղարկեց նաև Իրանի իր ներկայացուցիչ Հյուսեին Ալի Բեկին։ Իրանում գտնվելը, ապա նաև եվրոպական երկրներում շահի անունից վարած բանակցությունները Անտոնի Շիրլեյը գրի է առել ուղեգրության ձևով⁸³։

Հոռմում Անտոնի Շիրլեյը հավաստիացնում էր կաթոլիկ եկեղեցու պետին, որ իրանաբերական բոլոր «հերձվածողները», այսինքն հույները, վրացիները և այլք, հպատակություն են

⁸⁰ Շուրջ⁸⁰։ Հակոբյան. Ուղեգրություններ, էջ 408—447։

⁸¹ Նույն տեղում, էջ 418։

⁸² Նույն տեղում, էջ 448—459։

⁸³ Տե՛ս Sir Anthony Shirley. His relation of his travels into Persia. London, 1613; նաև՝ A new and large discourse of the travels of sir Anthony Shirley by sea and overland to the Persian empire, written by William Parry. London, 1601; տե՛ս նաև Dépêches du Piedro Duedo, ambassadeur de la seigneurie de Venise, près de la cour d'Allemagne, relatives à la mission de sir Anthony Shirley et de Hussein Aly bek Ռաֆայել դյու Մանի գրքի հավելվածում Etat de la Perse en 1660. p. 277—284.

հայտնելու իրեն, եթե պապը կաշմակերպի եվրոպական պետությունների հակաթուրքական դաշինքը⁸⁴։ Նման համաստիազման հրաքուժ ընկած կարող է լինել Անտոնի Շիրլեյի տեղեկությունը հայերի, վրացիների կողմից եվրոպական պետություններին արված օգնության դիմումների մասին և Շահ Աբասի մտադրությունը՝ օգտագործել հայ բանագնացներին եվրոպայի հետ վարվելիք դիվանագիտական բանակցություններում։

Երբ Շահ Աբասի դիվանագիտական ներկայացուցիչ Հյուսեին Ալի Բեկը շրջագայում էր եվրոպական մայրաքաղաքներում, գերմանական կայսր Ռուդոլֆը Շահ Աբասի մոտ էր ուղարկել հատուկ պատվիրակություն տրանսիլվանացի իշխան Կակաշ դե Ջալոնկեմենիի ղեկավարությամբ՝ եվրոպայի հետ Շահ Աբասի ծրագրած դաշինքի սասրս լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով։ Մյուս կողմից, էտիեն Կակաշը կայսեր կողմից հանձնարարություն ուներ Մոսկվայի ցարին ներգրավել հակաթուրքական դաշինքի մեջ⁸⁵։ Դեպի Իրան ուղևորության ժամանակ էտիեն Կակաշին ուղեկցում էր Գեորգ Թեկտանդեր ֆոն դեր Յաբելը։ 1603 թ. հոկտեմբերի 25-ին Լենքորանից ոչ հեռու, իրանական քաղաք Լանցենում մահանում է պատվիրակության ղեկավարը, և Թեկտանդերը ստիպված է լինում ինքը պազուս կայսեր ներկայացվելիք զեկուցագիրը Իրան այցելելու մասին։ Մենք օգտագործել ենք Շառլ Շեֆերի հրատարակությունը⁸⁶։

Թեկտանդերը գտնվել է Շահ Աբասի բանակում, որը թուրքերի դեմ պատերազմ էր վարում Արևելյան Հայաստանը նրանց ձեռքից ետ խլելու նպատակով։ Նա, որպես ականատես, նրկարագրում է Թավրիզի, Մարանդի, Նախիջևանի, Իրևանի գրավումը։ Շահը թույլտվությամբ նա եղել է նաև էջմիածնում ու տեղակցություն ունեցել հայոց կաթողիկոսի հետ։ Թեկտանդերի հաղորդած վկայությունները համընկնում են հայկական աղբյուրների հաղորդած տվյալներին։

ЕВРОПЕЙСКИЕ АВТОРЫ ОБ АРМЯНАХ И АРМЕНИИ (XIII—XVI вв.)

Источниковедческий обзор

Доктор ист. наук М. К. ЗУЛАЛЯН

Резюме

В изучении истории Армении XIII—XVI вв. труды европейских авторов указанного периода занимают немаловажное место. Эти труды (описания путешествий, дипломатические отчеты, торговые трактаты, реляции католических миссионеров из Армении, Турции и Ирана, исторические сочинения, являющиеся результатом длительного пребывания авторов на Востоке, и т. п.) порою содержат уникальные сведения, отсутствующие в армянских и восточных первоисточниках. Правда, все эти работы неоднозначны. Наряду с ценными трудами есть такие, которые, по сути дела, просто повторяют предыдущих авторов. В статье дается общий обзор этих источников на историческом фоне, побудившем того или другого автора написать свое сочинение.

⁸⁴ *Statu Eilat de la Perse en 1660*, p. 1X.

⁸⁵ Նույն տեղում, էջ XI:

⁸⁶ *Iter Persicum ou description du voyage entreprise en 1602*, Paris, 1877; *Կակաշ 1609 թ. հրատարակությունը, հետևյալ վերնագրով* Brève, mais non moins détaillée et véridique description du voyage en Perse.. Altenbourg, 1609.